

տունիքն և Գողթնեցիքը Ախական աշ-
խարհէն լինելը գտայ պատմուած, բայց
թէ նորա գաղութ են իսկապէս, չփառեմ.
որովհետեւ թէ զաւաոի և թէ տոնմի ա-
նոնը մի և նոյնն են:

Էջ 174. տող 26.

և Հրաման տայ քաղաքացեաց մարդկան
արգոյ և պատի լինել քան զգեղջկաց ո :
Աւզգ. պատով կամ ի պատոի, ոչ անշուշտ
արդյուպատի ? :

Էջ 177. տող 24.

և Բայց այլքն յանձն առնուն այսչափ
միայն, ի շարաթու հեծանել յորս և ի
պատերազմունս, և զմանկունսն թողուզ
անթլփատ, յորժամ լինիցին. քանզի ան-
կին էին: Եւ հրամայեցաւ յԱրշակայ մի
տալ նոցա կանայս ո : Աւզգ. կիտադրա-
րիւնիքն. և զմանկունսն թողուզ անթլփատ
յորժամ լինիցին: Քանզի անկին էին, և
հրամայեցաւ յԱրշակայ մի տալ նոցա
կանայս ո : Արշակ երկու պայման առա-
ջարկեր էր. 1. շարաթ օրեր որսի և պա-
տերազմի գնաւ, և 2. թլփատել մանուկ-
ները: Աւստի փորձութեան մատնուած թա-
զրատունիք աեկին լինելով, թազաւորը կը
հրամայէ շտալ կանայս մինչեւ որ այդ
երկու պայմանները յանձն չառնուն: Խսկ
ըստ թազրին կը հետեւի աեկին մարդկան
զաւակները եթէ ծնանին՝ թլփատուին !
Խսկ կարգուածներուն ?

Էջ 178. տող 19.

և Քանզի նա բովանդակ փոխաղըեաց
և որ ինչ ի քարտէսս դիւանին Եղեսիոյ՝
որ և Ասոյա, որ յաղաս թազաւորացն
մերոց պատմէր. որ մատեանքն ի Մծրնայ
էին փոխեալ անդը ո : Աւզգ. և որ և ուս-
հայ ո glossa « . . . որ մատեանքն ի
Մծրնայ էին փոխեալ անդը ո :

Էջ 184. տող 19.

և Եւ յառաջ քան յԱսիա հասանեն՝
յԵտարիէ դղեկին քարոզեցաւ ո : Աւզգ.
յԱստիրէ դղեկին ո ? յԱկոպուլին՝ համրաւն
հոչակեցաւ: Հմմտ. Էջ 186. տող 2 ներ-
ցեւ. և համրաւն հիացուցանէր զհելի-
նականն ո :

Էջ 187. տող 2.

և Ղովկացիք ամէնստուրը եղեն, Բիւ-
տացիք մասն են ի կազմածոյ նորատ: Աւզգ.
Բէովտացիք մտանեն ի կազմ զօրաց նո-
րա ո ? Ղովկացիք ակամայ անձնատուր ե-
ղած են, խսկ Բէովտացիք երեւի կամաւոր
կերպով և թերեւ զինուորեր են խսկ ա-
նոր բանակի մէջ. խսկ Աթէնց գուցէ յա-
ռաջազոյն ձեռնտու եղած է, անոր հա-
մար ալ չի թուարկուիր տիրապետուած
ազգերու մէջ:

Էջ 192. տող 14.

և Եւ ինքն ոչ հետամուտ լինել նմա,
այլ ընդ Ասորիս Հրէաստան փութայ հա-
սանել ո : Աւզգ. « լինի նմա ո ?

Հ. Գ. ՆԱԶԱՊԵՏԵԱՆ

ՊՐՈՖ. ԼԵՄԱՆԻ

Կիւթեր Հայսատանի հնագոյն պատ-
մութեան.

Յաւելուած դոկտ. Մարս Փան Թերշէ-
մի, «Արարական արձանագիրը Հայսատա-
նէն և Տիարպէթիրէն»:

Թիւ 21. Ախամանասուր թէ ժայռի ար-
ձանագրութիւն, Տիգրիսի-անցըրին բերանը:
Շատ աւելի գետն ի վեր քան նախորդ ար-
ձանագրութիւնն թիւ 20, նոյն կողմի վրայ
և երկու զանազան տեղեր, և նաեւ տողըն
15-17' յոյժ գետն ի վեր և անցըրին ներսը
փորուած են: Մինչեւ հիմյա ոչ որ զայն
մանրամասն նկարազրեց. զի Տէյլոր (Tay-
lor) (ինչպէս նաեւ յետ իմ այցելութեան
իմ ճանապարհի ընկերու) զայն շտեանն:
Սեստէրի (Sester) օրինակութեան (Ab-
klatsch) վրայէն Շրատէր (Keilinschr. Bibl.
Էջ 9-12 և 20) այս երկու մասե-
րուն նոյնութիւնը և միանգամայն Աղմա-
նասար թէ վերաբերիլը ճանչցաւ:

1. Ասոր, Սին, Շամաշ

2. Արագ, Բչգար են աստուածք մնծք,

3. որ սիրեն իմ թազաւորութիւնս և

4. մեծ կ'ընեն իմ անունս : Ապօմանասար,
5. Թագաւոր աշխարհի, Թագաւոր Ասորեստա-նի, որդի Ասուր Նասիրազայ Թագաւորին Ասորեստանեաց,
6. որդոյ Տուրուլտի - Նինիբի, Թագաւորին Ասորեստանեաց, առի նուաճելով իբր աշխարհակալ, ի
7. ծովէն Նախրի Երկրին մինչեւ ի մեծ ծովս արեւմնից
8. զերկիրն Հատոհ (Hatti) իւր բովանդակ սահ-մանօքն և պատեղի (?) զայն:
- 9.
10. Յանցոս Երկրին Խեղիտէի մոայ Ես
11. Սունէ, Դարիանի,
12. Աւրարտու,
13. իւր բուլոր շրջակայիւք
14. նուաճեցի ես
15. դէպ ի Գիլանս քալեցի ես, զհարկս
16. Գիլանայ ընդունեցայ: Երրորդ անգամ քա-լեցի
17. Նախրի և իմ անունս զրեցի Տիգրիսի ա-կանց վրայ:

Թիւ 22. Ժայռի արձանագրութիւն
Ապօմանասար թէ, ու հետի Տիգրիսի -
անցցին բերնէն, վերին ծակին առջեւ :
Արձանագրութեան ձախակողմը կայ թա-
գաւորին պատկերը՝ ներս նայող: Արձա-
նագրոս շատ կրած է ժամանակէն: մա-
ցած իրը ^{ծառ} մասն Լեման բազմաթիւ օ-
րինակութիւններով ապահոված է, և ի
Գերմանիա կրցած է՝ օգնութեամբ նոյն
թագաւորի տարեգրերուն՝ բնագրին պա-
կանեցը լրացնել: Ահաւասիկ ամրողջա-
ցուած բնագիրը.

1. Ապօմանասար, արքայ մեծ, արքայ հզօր, արքայ Ասուրայ, արքայ մեծ ծովովրգոց կոյտեռու, իշխան,
2. քահանայ Ասուրայ, նուաճած է, իթէ նա,
օգնութեամբ Շամաշայ և Աղազայ' իւր վրո-
տանութեան Աստուաներուն, յառաջ քա-
լէ,
3. ահեղ լեռներ յելից արեւու մինչեւ ի մուտս
արեւու:
4. Անպարտելին, որ, եթէ յառաջամարտիկ (Բոցի. «ի գլուխն») կոռի և
5. երբ նա զթշամին համածէ, լա անոնք իբր
յաղթական փոթորկայոյզ ալիք մը գե-
տին տապալէ: որ նուաճեց ի ծովէն երկրին
Նախրիայ մինչեւ ի մեծ ծովս
6. մոից, Զերկիրն Հատոհ իւր բովանդակ
սահմանօքն, զԱղիտինէ, Դարիանի, զՍուն-
մէ,
7. զԱղակիրուն զքաղաքն արքունի Արամայ Ու-
րարտացոյ, զԳիլրան,

8. զՆուրուսկիտ, զՈւրարտու, յակբերացն Տի-
գրիսի
9. մինչեւ ազգիւրն Երբատայ, (յԵտոյ) ի ծո-
վէն՝ մեր
10. տան վերաբերող (?) Զամուա Երկրին մին-
չեւ ցծով Քաղէսաստանի նուաճեցի ես (առի
ընդ սութք իմովք):
12. դէպ ի Բաբելոն զնացի ես, զու մատուցի
ի (Բաբելոն, Բորսիպպա), Քուտան, իջայ
(Երկրին Քաղդէցաւոց), իւր Քաղպաներն,
13. նուաճեցի ես. Քաղդէսաստանի թագաւորաց
հարկին ընդունեցայ.
14. իմ զինուց Երկիւր տարածուեցաւ մինչեւ
աղի զնուց: Արայիտորի
15. արքայ Դամասկոսի, Հաստի Երկրին Եր-
կուսասն թագաւորներով միասին քալեց
ինծի դէմ,
16. իրենց նետ պատերազմեցայ, ի պարտութիւն
մատնեցի, իրենց պատերազմիկ կառքերը,
Երիվարները,
17. իրենց պատերազմի անօթները առի, կեան-
քերների փրկեւու համար քախան:
(Ինչպէս Լեման կը դիմէ, ներկայ արձանագիրը
յէական կրկնութիւն մէ թիւ 20ի):

Թիւ 23. Ժայռի արձանագրութիւն Ապօ-
մանասար թէ, նախորդ արձանագրին տա-
կը փորուած: Շատ գեղեցիկ պահուած է
և օրինակութեան ժամանակ իսկ անմի-
ջապէս յայտնի եղաւ թէ թիւ 21ին կըրկ-
նութիւնն է: իմ ըրած փորձերս, օրինա-
կութիւն (Abklatsch) առնելու համար,
չյաջողեցան. իսկ իմ ճանապարհի ընկե-
րոջս այցելութեան ատեն կատարուած
փորձերը յաջողեցան: Բաւական յստակ
ըլլալուն համար ինցնազիր (autogra-
phische) տիպ մը տալ անհրաժեշտ չեմ
համարիր: Ուստի ես կու տամ հոս իմ
օրինակութեանս ընթերցումը:

1. Ասուր, Աղադ, Ախ, Շամաչ,
2. իստար (են) աստուածք մեծք, որք զի կը
սիրեն
3. իմ թագաւորութիւնս, որք իւր արքայի
մը զօրութեան
4. և փառապութեան իմ պատկառելի ա-
նուսն
5. մեծ ցրին, (ես) Ապօմանասար,
6. տե՛ք ծովովմիտց կոյտեռու, քահանայապետ
Ասուրայ,
7. հզօր Թագաւոր, Թագաւոր Ասորեստա-
նեաց, որդի Ասուրնասիրբազայ, թա-
գաւորին աշխարհի (Բոցի. «կոյտերու»),
Թագաւորին Ասորեստանեաց.
8. որդուց Տուրուլտի - Նինիբի, Թագաւորին
աշխարհի, Թագաւորին Ասուրայ, առի,
արշաւելով ի ծովէն

9. Երկրին հափրեայ մինչեւ ի ծովս արեւմտից,
10. զերկիրն Հատուէ (Hattie) || իւր բովանդակ շրջակայիւթը, մոայ յանցս երկրին էնգիւմիի,
11. գրաւեցի զԱռալմի, գԴախամի, զՈւրարուու, ընդունեցայ
12. երկրորդ անգամ հարկոս կիլանայ, եկի երրորդ անգամ յերկիրն
13. Նախրեայ, (և) գրեցի (հոն) իմ անունս յառ կունս Տիգրիսի:

Չորս արձանազրութիւններն եւս, թիւ 20)-23, են Աղամանասար թիւ. թագաւորութեան հնգետասաններորդ¹ տարիէն, և այդ ապացուցանելի է թիւ 21 և 23 կը յաւելուն մանրամանութիւններ միենոյն արշաւանքի մը վրայ, զոր 20 և 22 թիւ ւերու՝ և անտարակոյս ուրիշ շատ տեղեր եւս զրուած² պերճ-արձանազրութիւններն (Prunkinschrift) յընդհանուրու նկարագրած էին, և այդ արշաւանքը զինքն բերաւ նիշտ ի բարայս Տիգրիսի՝ Լնգիտէ, հոն արձանազիրը փորազբելու համար : Այս պատահեցաւ, ինչպէս Աղամանասար կ'աւանդէ, երրորդ արշաւանքին ի Նախրի, ի հնգետասաններորդ ամի՞ թագաւորութեան իւրոյ, որ տարւոյ համար Տարեգրը կը նշաննեն այցելութիւն մը Տիգրիսի ականց : Առաջինն և երկրորդը տեղի ունեցան անոր թագաւորութեան առաջին և երրորդ տարւոյն մէջ : Եօթներորդ տարւոյն համար եւս Տարեգրը այցելութիւն մը կը զնեն յակունս Տիգրիսի : Ասկայն այս տարուան մէջ Աղամանասար չկնաց ի Նախրի, այլ Նախրիի հարկերն ընդունեցաւ ի Տիլ-ապեհի, Արամէացի՝ տէրութիւն մը, սահմանակից Բիու-Աղիիիի և մասամբ զեռ Եփրատայ ալ ափանց վրայ տարածուող, ինչպէս Բիու-Աղինի, բայց մեծաւ մասամբ ծախ ափանց վրայ գտնուող, զի ոչ մէկ տեղ զայն Նախրիի

պետութիւնց ցանկին մէջ կը գտնենք : Հարկ է թէ այդ ժամանակ Տիգրիսի ուրիշ աղբեկը մը այցելած ըլլայ, զոր Տարեգրոց բոլորովին տարբեր ոճն այդ երկու տարբիներու մասին՝ կը հաստատէ :

Ի հնգետասաններորդ ամի արքային ժայռի պատերու վրայ թագաւորին պատկերն փորուած է, մինչ եօթներորդ տարւոյն մէջ արձան մը ջուրին մէջ կամ անմիշապէս աղբեր ափանց վրայ կանգնուած է, ինչպէս Սուպնատայ աղբեր ցովք : Հոն կրնան նաեւ միայն արձանը հասկցուիլ, որուն կը համաձայնի Բարիիի աղբերաց մօտ եղած զիւտը : Հնգետասաններորդ տարւոյն մէջ կ'ըսուի յատկապէս «առ ակունս Տիգրիսի, առ մոիւց անոր անցրին»⁴, անտարակոյս իրոք հակաղորութիւն մը եօթներորդ տարուան բացատրութեան կերպին, ուր խօսքն է ի վերայ «ականցն Տիգրիսի, ի վերայ տեղեացն, յորս բղանումն ջուրց կը կատարուի» : Առով կրնան, ըստ բովանդակ հանգամանաց իրաց, միայն Արգանա-առուի աղբիւրքն հասկցուիլ, որ բուն արեւմտագոյն ճիւզն է Արեւմտեան Տիգրիսի, և նաեւ ոչ թէ կիօլճիկ լճի աւելորդ ջուրը, զոր սա ջրոյն բարձր եղած ժամանակ Արգանայի կուտայ, այլ, նոյն իսկ Աղամանասարի վկայութեամբ, յայտնապէս ազատ ճիւզ մը աղբեր⁵:

Թրգմ. Հ. Յ. Աւագերան



1. Berl. Sitzungsber. 1900 S. 627 sub 6.
2. Հման. Monol. 55
3. Annaler Assurnasirbals Col. III Z. 55.
4. Berl. Sitzungsber. 1900, S. 628. & Werh.-Berl. anthr. Ges. 1901, S. 234
5. Տե՛ս Ellsnoorth Huntington. Through the great Canon of the Euphrates River. Geogra-

phical Journal, August 1902, p. 2. und die Karate Auf. p. 8. — Աղամանասար Տիգրիսի և Տիլ-ապեհ գտնուող հարկ պէտք է զիփրատիքի (Izoly) մօտ (ամիսին) անցած ըլլայ, ոչ հնաւ այն տեղէն ուր յետոյ Արգանակինի որդի Արգանը, Տիգրատպիւսէր Գի . ժամանակակիցը, արեւմտեան բաղդակական բեկեապէտ արձանագրութիւնը փորագրը: